ՀԿԿ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ (1959—1965 ԹԹ.)

Ա. Ս. ՋԱՆԻՆՅԱՆ

«Սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»[1],— *նշել է Վ. Ի. Լենինը։*

Կոմունիստական կուսակցությունն իր գործունեության հիմքում դնելով Վ. Ի. Լենինի պատգամները, մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման անցած հնգամյակների ընթացքում հսկայական աշխատանք ծավալեց ծանր արդյունաբերության զարգացման համար։ Դրանով ստեղծվեցին պայմաններ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և սոցիալիզմի հաղթանակի համար։ Սոցիալիզմի կառուցումն ավարտելուց հետո մեր երկիրը թևակոխեց կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ ՍՄԿԿ XXII համագումարն առաջին պլանի վրա դրեց այդ հասարակարգի նյութատեխնիկական բազայի ստեղծման խնդիրը, որը և դարձավ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. պլանի գլխավոր նպատակը։ Քննարկելով հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման 1959—65 թթ. պլանի դիրեկտիվները, ՀԿԿ արտահերթ XX համագումարը (1959) առանձնակի ուշադրություն դարձրեց նաև գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բարձրացման վրա և նշեց, որ անհրաժեշտ է «1960 թվականին ավարտել բոլոր կոլտնտեսությունների, սովխոզների ու ՄՏԿ-ների էլեկտրիֆիկացումը, առավելագույն չափով մեքենայացնել և էլեկտրիֆիկացնել գյուղատնտեսության արտադրությունը...»[2]։

Այդ նպատակով ՀԿԿ Կենտկոմը և հանրապետության Մինիստրների սովետը մի շարք գործնական միջոցառումներ ձեռնարկեցին արագացնելու հանրապետության մեքենաշինական, էլեկտրատեխնիկական արդյունաբերության ու իռիգացիոն շինարարության տեմպերը։ Յոթնամյակի տարիներին Երևանից բացի մեքենաշինության նոր կենտրոններ դարձան Լենինականն ու Կիրովականը։ Մեքենաշինական գործարաններ կառուցվեցին նաև Հրազդանի, Սևանի, Կամոյի, Ստեփանավանի և հանրապետության մի շարք այլ շրջաններում։

Զգալի աշխատանք կատարվեց նաև էներգիայի պաշարների ավելացման գործում։ Շահագործման հանձնված մի շարք էլեկտրակայանների հետ միասին, բնական դազի բազայի վրա Երևանում, Կիրովականում և Հրազդանում կառուցվեցին ջերմաէլեկտրակայաններ։ Արդեն «յոթնամյակի վերջին էլեկտրաէներգիայի արտադրությունը հանրապետությունում 1940 թ. համեմա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 591։

[2] ՀԿԿ XX համագումարի բանաձևը, Երևան, էջ 18։

տությամբ ավելացավ 7,7 անգամ, իսկ 1913 թ. համեմատությամբ՝ 595 անգամ»[3]։

Մեքենաշինության և էլեկտրաէներգիայի արտադրության զարգացումն զգալի չափով բարձրացրեց գյուղատնտեսության էներգազինվածությունը։ Բավական է ասել, որ «1965 թ. էլեկտրաէներգիայի ծախսումը գյուղատնտեսության մեջ կազմեց 287 մլն. կվտժ, 1958 թ. 85 մլն. կվտժ-ի փոխարեն»[4]։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում նշանակալից է քիմիական արդյունաբերության դերը, որի զարգացման հարցը միշտ գտնվել է ՀԿԿ ուշադրության կենտրոնում։ ՍՄԿԿ 1958 թ. մայիսյան, 1963 թ. դեկտեմբերյան և 1964 թ. փետրվարյան պլենումների որոշումների հիման վրա սիստեմատիկաբար քննության են առնվել հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացման հարցերը և ընդունվել են գործնական որոշումներ։ ՀԿԿ Կենտկոմի 1964 թ. մարտյան պլենումի որոշմամբ հանձնարարվեց համապատասխան կազմակերպություններին, որպեսզի «1964 թ. պատրաստվի 22 հազար մարդ հողագործության քիմիացման համար, 15 հազար՝ անասնապահության քիմիացման համար և 4 հազար՝ գյուղատնտեսության արտադրության կազմակերպման համար»[5]։

Այդ որոշմամբ առաջարկվեց ժողտնտխորհին արագացնելու քիմիայի կառույցների շինարարությունը՝ Երևանում, Կիրովականում, Ալավերդում, որով զգալիորեն ավելացավ գյուղատնտեսության մատակարարումը քիմիական պարարտանյութերով և քիմիկատներով։ Հանրապետությունում «1963 թ. յուրաքանչյուր ամսվա ընթացքում արտադրվում է այնքան քիմիական նյութեր,— ասված է ՀԿԿ Կենտկոմի 1964 թ. հունվարյան պլենումի որոշման մեջ,— որքան արտադրվել է 1950 թ. ամբողջ տարվա ընթացքում»[6]։

Նոր կառույցների գործարկմամբ յուրացվեցին քիմիական արտադրության մի շարք տեսակներ, որոնք բացառիկ նշանակություն ունեն գյուղատնտեսության համար։ Հենց ամոնիակի արտադրության ընդարձակումը նպաստավոր պայմաններ ստեղծեց ազոտային պարարտանյութերի ավելացման համար և այդ բազայի վրա կազմակերպվեց քիմիական նոր նյութի՝ կարբամիդի արտադրությունը, որը գյուղատնտեսության համար ծառայում է որպես պարարտանյութ, իսկ կենդանիների համար՝ կերանյութ։

Հանրապետության քիմիական արդյունաբերության նոր ուղղություն է հերբիցիդների արտադրությունը։ Հենց միայն «կրոտիլին» հերբիցիդի օգտագործումը մոլախոտերի ոչնչացման գործում տնտեսական մեծ օգուտներ է տալիս։ Կարևոր է նաև պոլիէթիլենային թաղանթի արտադրությունը Երևանում, որն օգտագործվում է ձմեռվա պայմաններում խաղողի այգիների ծածկոցի, ջերմոցային տնտեսության և այլ նպատակների համար։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում մեծ ավանդ է ներդնում ջրաշինարարությունը։ Յոթնամյակի տարիներին Թալինի, Արզնի-Շամիրամ ջրանցքների առաջին հերթերի և Կոտայքի ջրանցքի,

---

3 Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1967, էջ 58։

4 Ա. Կ. Այրումյան, Հայաստանի գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական վերափոխումները, Երևան, 1967, էջ 19։

5 ՀԿԿ Կենտկոմի 1964 թ. մարտյան պլենումի սղագրական հաշվետվությունը, ՀԿԿ Կենտկոմի ընթացիկ արխիվ, թ. 45։

6 Նույն տեղում, թ. 6։

ինչպես նաև Ախուրյանի, Ապարանի, Մանթաշի, Սասունաշենի խոշոր ջրամբարների, Նոյեմբերյանի, Մխչյանի, Արևշատի և մի շարք այլ ջրհան կայանների ու ջրամբարների կառուցման շնորհիվ զգալիորեն ավելացան ջրովի հողատարածությունները։

Թալինի ջրանցքի առաջին հերթի շահագործումով Թալինի և Հոկտեմբերյանի շրջաններում ոռոգելի դարձավ ավելի քան 12 հազար հեկտար հողատարածություն։ Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի, ինչպես նաև Կոտայքի ջրանցքի կառուցմամբ Արովյանի, Շահումյանի, Էջմիածնի և Արտաշատի շրջաններում ոռոգվեցին ավելի քան 25 հազար հեկտար հողատարածություններ, իսկ Ախուրյանի, Ապարանի ջրամբարների շահագործումով լրացուցիչ կերպով ջրովի դարձան մոտ 30 հազար հեկտար նոր հողատարածություններ։ Ջրովի դարձած հողատարածություններն օգտագործվեցին մեծ մասամբ խաղողագործության և պտղաբուծության զարգացման նպատակով։ Նույն նպատակի համար օգտագործվեցին նաև Նոյեմբերյանի շրջանում կառուցված ջրհան կայանի միջոցով ոռոգվող 4 հազար հեկտար հողատարածությունները։

Այդ տարիներին զգալի աշխատանք է կատարվել նաև հանրապետության արոտավայրերի ջրարբիացման, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի ու մյուս շրջանների ճահճակալած և գերխոնավացած հողերի չորացման, աղազերծման և դրանք գյուղատնտեսության օգտագործման տակ դնելու գործում։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ճանապարհին կարևոր նշանակություն ունեցան գյուղատնտեսական գիտության նվաճումների և կազմակերպական կարգի մի շարք այլ միջոցառումների ներդրումը գյուղատնտեսական արտադրության մեջ։

Յոթնամյակի տարիներին ՀԿԿ Կենտկոմը և հանրապետության Մինիստրների սովետը գործնական մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտների, գիտահետազոտական խոշոր լաբորատորիաների ու զանազան կայանների ցանցն ընդարձակելու և նրանց նյութա-արտադրական բազան ամրապնդելու ուղղությամբ։ Այդ միջոցառումներն օգնեցին գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվներին լուծելու հանրապետության գյուղատնտեսության մի շարք պրոբլեմատիկ հարցեր։ Մշակվեցին և գործադրության մեջ դրվեցին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման կոմպլեքս միջոցառումներ ըստ գյուղատնտեսական գոտիների։ Ուսումնասիրվեցին հանրապետության հողատեսքերը և ըստ այդ հողատեսքերի մշակվեցին ու տնտեսություններին հանձնվեցին ագրոքիմիական մեծ մասշտաբների քարտեզներ, որոնց օգնությամբ մեքենայացվեցին հողերի պարարտացումը, վարը, ցանքը, մշակումը, բերքահավաքը և այլն։

Այդ մեթոդով կատարված ցանքսերը տալիս են տնտեսական մեծ արդյունքներ։ Այսպես. միայն Կալինինոյի շրջանի Նորաշեն գյուղի կոլտնտեսությունում նոր մեթոդով կատարած ցանքսով «աշնանացան ցորենի միջին բերքը 1965 թ. կազմել է 35 ցենտներ, կարտոֆիլինը՝ 231 ցենտներ։ Այն դեպքում, երբ նախորդ տարիների աշնանացան ցորենի միջին բերքը այստեղ կազմել է 11,9 ցենտներ, իսկ կարտոֆիլինը՝ 133 ցենտներ»[7]։

---

7 «Տեղեկագիր գյուղատնտեսական գիտությունների», 1965, № 11—12, էջ 151։

Կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ գիտնականների մշակած և արտադրության մեջ ներդրված առանց հողի, արհեստական պայմաններում բանջարեղենի ստացումը։

Նշված մեթոդների առավելությունը կայանում է ոչ միայն նրանում, որ դրանց ներդրումն արտադրության մեջ զգալիորեն ավելացնում է արդյունքները, այլև բարձրացնում է գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման կուլտուրան և պայմաններ է ստեղծում գյուղատնտեսական աշխատանքն արդյունաբերական հիմքի վրա դնելու համար։

Յոթնամյակի ընթացքում զգալիորեն ամրապնդվեց հանրապետության գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան և նրա աշխատատար պրոցեսների մի մասը ենթարկվեց մեքենայացման։ Կոլեկտիվ տնտեսություններում «1965 թ.՝ 1958 թ. համեմատությամբ տրակտորների թիվն ավելացել է 260 տոկոսով, դրանց քարշային կարողությունը՝ 214 տոկոսով։ Հացահատիկային կոմբայնների թիվն ավելացել է 132 տոկոսով, բեռնատար ավտոմեքենաների թիվը՝ 174 տոկոսով»[8]։

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը համադրելի գներով 1963 թ. համեմատությամբ 1965 թ. աճեց 19,6 տոկոսով կամ արտադրանքի տարեկան միջին աճը կազմեց 9,8 տոկոս[9]։ Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և աշխատատար պրոցեսների մի զգալի մասի մեքենայացումը նպաստեցին նրա արդյունքների ավելացմանը։ 1958 թ. համեմատությամբ 1965 թ. հանրապետության կոլեկտիվ տնտեսություններում և սովխոզներում գյուղատնտեսական կուլտուրաների մեկ հեկտարի բերքատվության աճը ներկայացնում է հետևյալ պատկերը (ցենտներով)[10].

	1958 թ.	1965 թ.	աճը
1. Հացահատիկային կուլտուրաներ	9,4	10,8	1,4
2. Ծխախոտ	12,6	17,4	4,8
3. Կարտոֆիլ	93,0	97,0	3,0
4. Բանջարեղեն	154,0	179,0	25,0
5. Պտուղներ	25,5	40,0	14,5
6. Խաղող	50,3	53,0	2,7

Յոթնամյակի տարիներին հանրապետության մի շարք շրջանների կուսակցական, սովետական և գյուղատնտեսական մարմինները, ինչպես նաև կոլեկտիվ ու սովետական տնտեսությունների կուսակցական կազմակերպությունները լուրջ հաջողությունների հասան գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, նրա աշխատատար պրոցեսների մեքենայացման և գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում։

Այսպես, 1965 թ. Ստեփանավանի շրջանի «51 կովանոցները էլեկտրիֆիկացված էին, 8-ը ենթարկված էին կոմպլեքսային մեքենայացման, 13 կովա-

---

8 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1966, № 1, էջ 219։

9 Տե՛ս Ա. Ս. Ջ ա ն ի ն յ ա ն, ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿԿ XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 2։

10 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», Ереван, 1966, էջ 105, 106, 112։

նոցներում տեղադրված էին ավտոխմոցներ, 48 կովանոցներում մեքենայացված էր կերերի բաշխումը, 37-ում՝ գոմաղբի հեռացումը, իսկ 38-ում՝ կովերի կիթը»[11]։ Կալինինոյի շրջանի «68 կովանոցներից 38-ը կառուցվել են տիպային նախագծով, բոլոր կովանոցները էլեկտրիֆիկացված են, 61 կովանոցներում մեքենայացված է կերերի մատակարարումը, 46-ում՝ գոմաղբի տեղափոխումը, իսկ 62-ում՝ կովերի կիթը»[12]։

Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղի կուսակցական կազմակերպությունը, պատմում է շրջանային «Փարոս» թերթը, մի քանի անգամ քննության է առել կոլտնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման հարցը և հասել է անհրաժեշտ արդյունքների։ Այդ կոլտնտեսությունում մեքենայացված են հացահատիկի, եգիպտացորենի, կարտոֆիլի և գյուղատնտեսական այլ կուլտուրաների ցանքը, մշակումը և բերքահավաքը։ Կոլտնտեսությունը 1965 թ. ուներ «17 զանազան մակնիշի տրակտոր, 7 կոմբայն, 12 բեռնատար ավտոմեքենաներ, բացի այդ, նաև գոմաղբ ցրող, պարարտանյութեր բեռնող, ծխախոտ հավաքող և մամլող, ինչպես նաև թունաքիմիկատներ սրբսկող, հանքային պարարտանյութեր ցրող և գյուղատնտեսական շատ այլ մեքենաներ ու գործիքներ»[13]։

Գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման գործում աչքի ընկավ Սպիտակի շրջանի Սպիտակի սովխոզի կուսակցական կազմակերպությունը, որի նախաձեռնությամբ սովխոզի մեխանիզատորների ուժերով կոմպլեքսային մեքենայացման ենթարկվեց սովխոզի անասնապահական ֆերման։ Սպիտակի կուսակցական շրջկոմը կազմակերպեց շրջանի մեխանիզատորների և կոլտնտեսությունների նախագահների հանդիպումը Սպիտակի մեխանիզատորների հետ։ Այս օգտակար հանդիպումը տվեց մեծ արդյունք։ Դրանից հետո «շրջանում կոմպլեքսային մեքենայացման ենթարկվեցին կոլտնտեսությունների և սովխոզների 12 անասնապահական ֆերմաներ»[14]։

Այսպիսի արդյունքների են հասել նաև Շահումյանի և մի շարք այլ շրջանների կոլեկտիվ և սովետական տնտեսությունները։

Մեքենայացումը տալիս է տնտեսական մեծ արդյունք։ Ստեփանավանի շրջանի տնտեսություններում «եթե 1958 թ. կաթի համախառն արտադրանքը կազմել է 7694 տոննա, ապա 1965 թ. այն հասել է 10805,8 տոննայի։ Նույն ժամանակաշրջանում մեկ կովի միջին կաթնատվությունը 1811 կգ-ից հասել է 2015 կգ-ի, մսի համախառն արտադրանքը աճել է 115 տոննայով, ձվինը՝ 221 հազար հատով»[15]։

Կալինինոյի շրջանի կոլտնտեսություններում և սովխոզներում «1965 թ.՝ 1964 թ. համեմատությամբ 1034 տոննա ավել կաթ է արտադրվել։ Նույն ժամանակամիջոցում կովերի կաթնատվությունն ավելացել է 105 կգ-ով, կովերի միջին կաթնատվությունը հասցնելով 2418 կգ-ի»[16]։

Այսպիսով, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում հանրապետության նվաճումները ակնառու են։ Սակայն

11 «Գյուղտեխնիկայի» հանրապետական միավորման ընթացիկ արխիվ, 1965։
12 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 87. գ. 746, թ. 177։
13 «Փարոս», 1965, № 130։
14 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1966, № 5, էջ 8։
15 «Փարոս», 1966, № 9։
16 «Սոցիալիստական անասնապահություն», 1966, № 12։

դրանք ավելի բարձր կլինեին, եթե թույլ չարվեին կազմակերպական կարգի մի շարք սխալներ ու թերություններ։

Ջնայած ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումի այն պարզ ցուցումին, որ ՄՏԿ-ների վերակազմումը ՆՏԿ-ներով պետք է կատարել աստիճանաբար, ելնելով տվյալ շրջանի կոնկրետ պայմաններից և տնտեսական հնարավորություններից, հանրապետությունում այդ վերակազմումը կատարվեց միանգամից և ոչ բոլոր դեպքերում հաշվի առնվեցին շրջանների ու կոլտնտեսությունների կոնկրետ պայմանները։ Դրանով փոխվեց գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման կարգը և նոր ստեղծված ՆՏԿ-ներն իրենց աղքատ նյութատեխնիկական բազայով և աշխատանքի կազմակերպման ձևերով չկարողացան ապահովել գյուղատնտեսության բարդ տեխնիկայի նորոգումը, նրանց պահեստամասերով ապահովումը և նոր տեխնիկայի մատակարարումը կոլտնտեսություններին։

Բացի այդ, կոլտնտեսությունների մի զգալի մասը չուներ համապատասխան մեխանիզատորական կադրեր, նյութական անհրաժեշտ միջոցներ ու բազա՝ այդ տեխնիկան գործադրելու համար։ Դրա հետևանքը եղավ այն, որ այդ տարիներին զգալիորեն իջավ գյուղատնտեսական տեխնիկայի արտադրողականությունը և ավելացան նրա վրա կատարված ծախսերը։ Բավական է ասել, որ հանրապետությունում. «Անցած յոթ տարիների ընթացքում 15 ձիու ուժի մեկ տրակտորի տարեկան արտադրողականությունը միջին հաշվով իջել է 107 հեկտար փափուկ վարով, իսկ հացահատիկային կոմբայնի սեզոնային բեռնվածությունը՝ 35 տոկոսով»[17]։ Ավելին, այդ տարիներին մեկ հեկտար փափուկ վարի հաշվով վառելանյութի ծախսն ավելացել է 3,8 կգ-ով կամ 26,7 տոկոսով»[18]։

Եթե 1959—1965 թթ. ընթացքում «կոլտնտեսությունների և սովխոզների մեքենատրակտորային պարկը մեծացել է 2,5 անգամ, ապա մեքենայական աշխատանքների ծավալը ավելացել է միայն 43,8 տոկոսով»[19]։ Դա զգալիորեն հարվածեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը և նրա արդյունքների ավելացմանը։ Պակաս վնաս չբերեց նաև գյուղատնտեսության ղեկավարման գործում այդ տարիներին հանդես բերված կամայականություններն ու սուբյեկտիվիզմը և դրա հետևանքով մեր երկրի տնտեսական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից չբխող կուսակցական ու գյուղատնտեսական մարմինների հաճախակի վերակառուցումները, գյուղատնտեսական աշխատանքի կազմակերպման մի շարք հասունացած հարցերի լուծման ձգձգումը։ Սխալներ թույլ տրվեցին կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման և աշխատողների վարձատրման ու նյութական շահագրգռվածության, ինչպես նաև կոլտնտեսականների անհատական և հասարակական շահերի ճիշտ զուգակցման հարցերում և այլն։ Այնուհետև, կոլտնտեսություններում աշխատանքի կոլեկտիվ ու մանրխմբային գործարքով կատարումը, անհատական գործարքի թերագնահատումը և աշխօրերով վարձատրման ձևն անհրաժեշտաբար չեն նպաստել գյուղատնտեսության արտադրության բարձրացմանը։

---

17 «Լենինյան ուղիով», 1966, № 3, էջ 81։

18 Նույն տեղում, էջ 82։

19 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1966, № 3, էջ 43։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը և նրա արդյունքների ավելացմանը լուրջ կերպով խոչընդոտեցին նաև ցանքաշրջանառության կոպիտ խախտումները, շրջանների ու կոլեկտիվ տնտեսությունների հախուռն ու չհիմնավորված խոշորացումները, գյուղատնտեսական արտադրության միանգամայն անբավարար տեղաբաշխումն ու մասնագիտացումը։

Բավական է ասել, որ յոթնամյակի մի քանի տարիների ընթացքում հանրապետությունում զգալիորեն կրճատվեցին կերային կուլտուրաների ցանքատարածությունները, որով խախտվեց ցանքաշրջանառությունը։ Միայն 1961—1964 թթ. «կոլտնտեսություններում և սովխոզներում բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունները կրճատվել են 32,6 հազար հեկտարով, կամ 35 տոկոսով, իսկ միամյա խոտաբույսերինը՝ 18 տոկոսով»[20]։

Այդ կազմակերպական հարցերի ժամանակին չկարգավորումը և գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու նրա արդյունքների ավելացման գործում թույլ տրված լուրջ սխալներն ուղղվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թ. հոկտեմբերյան և նոյեմբերյան պլենումների և, մասնավորապես, 1965 թ. մարտյան պլենումի որոշումներով։ ՍՄԿԿ-ն հետևողական միջոցառումներ է ձեռնարկում ամրապնդելու գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան և ապահովելու նրա հետագա զարգացումը։ Այդ նպատակին էին մասնավորապես ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի 1966 թ. մայիսյան, 1968 թ. հոկտեմբերյան և 1970 թ. հուլիսյան պլենումների որոշումները։ Կոմունիստական կուսակցությունը նորանոր միջոցառումներ է ձեռնարկում ավելի ևս ամրապնդելու և զարգացնելու գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։

БОРЬБА КОМПАРТИИ АРМЕНИИ ЗА УКРЕПЛЕНИЕ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОЙ БАЗЫ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА (1959—1965 гг.)

А. С. ДЖАНИНЯН

Резюме

Для укрепления материально-технической базы сельского хозяйства Компартия Армении проводила важнейшие мероприятие. За годы семилетки были введены в строй новые машиностроительные, электротехниечские и химические заводы и предприятия, которые способствовали укреплению материально-технической базы сельского хозяйства, республика получила новые тракторы, комбайны и сельскохозяйственные машины. Благодаря этому машинно-тракторный парк колхозов и совхозов республики увеличился в 2,5 раза. Сельское хозяйство получило новые виды химикатов, гербицидов и т. д. Большие успехи были достигнуты также в области ирригации.

Постановление мартовского (1965 г.) Пленума ЦК КПСС сыграло огромную роль в устранении допущенных ошибок и дальнейшем развитии сельского хозяйства.

20 ՄԼԻ-ի Հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 86, գ. 308, թ. 17։